

1283

ԹՆԿԱԳԱՐԱՆ

ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԳ

ԿԻ. 203Ի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՏԵՏՐ 1.

ԳԻՆ 60 ՓԱՐԱՅ



Կ. ՊՕԼԻՍ

ՔՅՊԱՐԱՆԻ ԹԱԿԷՆՈՒ ՏԻՂԻԹՅԱՆ

— 1867 —



Գրան
Արեակ Ալպոյանեանք
Հանդէս — Մարտիս

ԿԻՁՅԻ

ՊՆՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱՅԻՐԹՈՒԹԵԱՆ



ԹԱՐԳՄԱՆՆԵ Ի ԳԱՂՂԻԱՐԷՆԷ

ՄԱՆՈՒԷԼ ԲԱՐՈՒՆԱԿ ԻԻԹԻԻՄԵԱՆ

ԲԺԻՇԿ

ԱՇԱԿԵՐՏԵԱԼ

Կ. ՊՕԼՍՈՅ ԵՒ ՓԱՐԻՉԻ

ԱՐԳՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԱՅ

ԵՒ

ԽՄՐԱԳԻՐ

ԿԻԼԻԿԻԱ ԱՄՍԱՏԵՏՐԻ


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ


Ի ՏՊԱՐԱՆԻ ԹԱԳԻՈՍԻ ՏԻՎԻԹՃԵԱՆ

— 1867 —

1283

ԱՄ
963





ՆՈՒԷՐ


ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ

ԱՌ

ԲԱՐԵՐԱՐ ԲԱՐԵՎԱՄ ԷՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ

ԶՄԻՒՆԻԱՑԻ



ՅԱՌԱՋԱՐԱՆ

Հանդուցեալ Խաչատուր Սիրելի Աղբօրս
“Սկզբունք Ղաստիարակութեան” անուն գործոյն առաջին հատորի “դաստիարակութիւնը կատարելագործելու համար օգտակար կրթութիւններ” վերնագրով յաւելուած գլխոյն մէջ կրէ թէ .

“Բայց ամէն բանէ աւելի ծնողք հոգ տանելու են իրենց զաւակաց իմացական զարգացմանն . Աթէ միջոցն ունին ընտիր թանգարան մը կազմեն , ուր գտնուին ամենէն աղէկ բառագիրներն , երևելի պատմագիրք , ատենաբանք , հռչակաւոր բանաստեղծք , և կրօնից ու բարոյականութեան վերաբերեալ գլխաւոր գործերը : Աերչնչեն անոնց սիրտն ընթերցասիրութեան քաղցր ճաշակն , որ միայն կկաղդուրէ ու կկատարելագործէ անոնց իմացական ձիրքերը : Ղարձնեն ուշագրութիւնին գլխաւորապէս արդի և վաղեմի պատմութեանց ուսմանը , բայց ոչ , նիւթապէս թուականներուն ու իրողութեանցը միայն մտադիր ըլլալով , այլ խորհրդածելով ու քննելով երևելի անցից պատճառներն ու արդիւնքը . դարուց բերմունքը . կարճ խօսքով ուսանելով պատմութեան իմաստասիրութիւնն” :

Աւ կաւելցնէ նաև ըսելով թէ , “ երեք

տեսակ պատմութիւնք կան, Առաջին: Ընդհանուր պատմութիւն ազգաց: Արկորդ: պատմութիւն մասնաւոր ազգի մը խորին հետազոտութեամբ գրուած: Արրորդ: պատմութեան իմաստասիրութիւնը. կամ թէ խորհրդածութիւն պատմագրական եղելութեանց վրայ: Առաջին երկու կարգէն պատմութիւնք կգտնուին մեր ազգին մէջ. բայց երրորդն՝ ինչպէս է Վիզոյի Վաղաքակրթութեան պատմութիւնը, կարծեմք թէ դեռ ծանօթ չէ Ազգին”:

Արդարեւ, հռչակաւոր Վիզոյի այս պատուական գործը, զոր ըրած է Ժ.Վ. դասերու ձևով, կխօսի արդի ընկերական վիճակին գրեթէ խաւոր տարերց վրայ, ինչպէս Վալուածապետութիւնն, Այնուականութիւնն, Ահեղեցին, Հասարակութիւնն և Թագաւորութիւնը: Աքննէ ասոնց յաջորդաբար յառաջադիմութիւնն, և գարերէ ի վեր ունեցած փոփոխութիւնները: Արինտուէ թէ, այս տարերց մէջէն որոնք եղան աշխարհս փոխող մեծ անցից պատճառք, ինչպէս Խաչակիրք, Ժ.Չ. դարուն Արօնական յեղափոխութիւնն, և Ժ.Ղ. դարուն Անգլիոյ յեղափոխութիւնը: Անկարագրէ մեծ զգուշութեամբ միջին դարուց, երկար ժամանակէ ի վեր մաքաւման մէջ եղող տարերց ներքին փոփոխութիւնն, որ վերջապէս արդի ընկերա-

կան վիճակն երկու մեծ կարողութեանց բաժնեց "Ժողովուրդք և Առաւելարութիւնք": Առտայ, Լուգովիկոս Ժ.Վ. ք ի կառավարութեան պատկերն, և Ալեյեօմ Վ. ի դէմ, երկար ատեն ըրած մտքառումը. Նոյնպէս Վաղղիոյ Ժ.Վ. ք դարուն պատմութիւնն, որ (Վաղղիա) Եւրոպական լուսաւորութեան կեդրոն եղած է . . . :

Աիզյի՛ այս դասերուն որչափ օգտակար ըլլալն, այս մէկ քանի տողերով յայտնելն անկարելի է :

Մենք ալ, ինչպէս Եղբայրս, համոզուած ենք, թէ Աիզյի՛ Վաղաքակրթութեան պատմութիւնն ամէն ոք կարգալու է. որոյ ընթերցանութիւնն ոչ միայն օգուտ է, սովորելով թէ ինչպէս եւրոպական լուսաւորութիւնը ծնած և քայլ առ քայլ յառաջ դացած է. այլ անհրաժեշտ է այն ազգին կամ ժողովրդեան որ լուսաւորուիլ կիտախաքի, ինչպէս մեր ազգն. որովհետև Աիզյի այս գիրքը կարգալով ամէն ոք կրնայ սովորիլ թէ որոնք եղած են ազգ մը, ժողովուրդ մը կամ անհատ մը լուսաւորելու կամ քաղաքակրթելու միջոցները :

Աիզյի այս գործին ընթերցանութիւնը կարևոր և օգտակար ըլլալուն մէկ ապացոյցն ալ սա է թէ, սոյն գիրքէն, 1854 էն մինչև 1866

Թուականն , այսինքն 12 տարուն մէջ , միայն Վաղղլեարէն լեզուաւ 350,000 օրինակ ծախուած , և հետզհետեալ ծախուելու վրայ է : Ըւելի համողութեանք , երբ փնտուելով սովրեցանք թէ , Վիզջի այս գիրքը , Վերմաներէնի , Ընգղեարէնի , Խտալերէնի ալ թարգմանուած է , և ամէն մէկ լեզուէն ալ հարիւր հազարներով ծախուած :

Ուստի , մենք ալ Վարիլ գտնուած ատեննիս զանի Հայացի լեզուի թարգմանելով , ամէն շարթու երկու ժամ ասոր վրայ աշխատելով , այսօր հրատարակել կսկսինք , փոքր տետրներու ձևով . որպէս զի դիւրագին ըլլալով , ամէն ազգային կարող ըլլայ օրինակ մ'ունենալով ոչ միայն միանգամ , այլ շարունակ կարգաւ :



ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻՆ

Ղառնն նիւնն . — Արդիոյ տաղտախրնոսն
 ինննն տարմոսնննն . — Արդիոյ տաղտախրնոսն
 իննննննն Ղառննննննն . — Թէ տաղտախրնոսն
 ինննննննննննննն . — Թէ տարմոսնննննննննն
 ննննննննննննննննն . — ԱՐԱՂԱՐԱԿՈՒԹՈՒՒՆ
 թարննննննննննննննննննննննննննննննննննն .
 — Արնոսննննննննննննննննննննննննննննննն
 ինննննննննննննննննննննննննննննննննննն .
 Նննննննննննննննննննննննննննննննննննննն
 Ննննննննննննննննննննննննննննննննննննննն
 — Թէ այս երկննննննննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 և ննննննննննննննննննննննննննննննննննննն
 ինննննննննննննննննննննննննննննննննննննն
 — Սարդոսնննննննննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 — Թէ տաղտախրնոսննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 և ննննննննննննննննննննննննննննննննննննն
 — Սէնն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 — Ղառննննննննննննննննննննննննննննննննն
 իննննննննննննննննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն
 նննննննննննննննննննննննննննննննննննննն

ԱՐԱՂԱԿՈՒԹՈՒՆ

Պարոնայք .

Չենէ ընդունած այս ջերմ ընդունելու
 թիւնն ինն գրգիւ կուտայ : Պիտի համարձա
 կիմ ըսել թէ , զայն կընդունիմ իբրև գրաւ
 այն համակրութեան , որ չգաղթեցաւ մեր մէջ ,

այնպիսի երկայն ատենի բաժանման միջոցին շնա-
յելով : Ասի թէ համակրութիւնը չդադրեցաւ
գոյանալէ . իբր թէ հոս կգտնէի մի և նոյն ան-
ձերը , մի և նոյն սերունդն որ սուրբութիւն ու-
նէին գալ , եօթը տարի առաջ , իմ աշխատու-
թեանցս ընկերանալու : (Աիշօյ յուղեալ կերևայ ,
և կանչ կարնու վայրկեան մի) : 'Արու՛մ կխընդ-
րեմ', Պարոնայք , ձեր այս ջերմ ընդունելու-
թիւնը շփոթեց զիս . . . : Արկին հոս գալովս ,
ինձ այնպէս կերելի թէ , ամէն բան ինձ հետ
կրկին պիտի գայ , թէ , ոչինչ փոխուած է :
Սակայն ամէն բան փոխուած է , Պարոնայք ,
և բոլորովին փոխուած : (շարժում) : Աօթը
տարի առաջ , հոս կմտնէինք անհանդիստ և
տխուր . դժուարութիւններով , վտանգներով
չըջապատեալ ըլլալնիս գիտէինք , կզգայինք
դէպի գէշութիւն մը քաշուելնիս , և որոյ հա-
մար ունայն տեղը ծանրութեամբ , հանդար-
տութեամբ և խոհեմութեամբ դէմն առնել
կաշխատէինք : Այսօր ամենքնիս ալ կժողովինք ,
դուք , ինչպէս և ես , վստահութեամբ և յու-
սով , սիրտերնիս խաղաղ և գլուխնիս ազատ :
Միակ միջոցաւ մը , Պարոնայք , կրնանք յայտ-
նել մեր այս մասին երախտագիտութիւնն . այն
է մեր ժողովքներուն , մեր դասախօսութեանց
մէջ , մի և նոյն հանգստութիւնը , մի և նոյն

խոհեմութիւնն ունենալ, զորս ունէիք երբեմն, ասոնց մէնէ յափշտակուելէն վախցած և կասկած ունեցած ատեննիս : Հրաման խնդրելով Չնէ, կըսեմ թէ, բախտն երկբայելի, փափուկ և դիւրաբեկ է . յոյսը՝ վախին նման խնայել պէտք է . հիւանդութենէ նոր ելած վիճակն ալ, հիւանդութեան առաջին նշանները տեսնուելու ատենին նման մի և նոյն խնամոց կկարօտի : Այստա՛հ եմ, Պարոնայք, թէ ասոնց ամէնն ալ պիտի ունենաք : Այն իսկ այս համակրութիւնը, կարծեաց, զգայմանց, գաղափարաց այս հաւատարիմ և սերտ հաղորդակցութիւնն, որ դժուարին օրերու մէջ զմեզ կըմիացնէր, և վտանգէ ազատեց, զմեզ նոյնպէս աղէկ օրերու մէջ ալ պիտի միացնէ, և յարմար ընէ բոլոր արգիւնքները վայելելու : Այստա՛հ եմ, Պարոնայք, վստահ եմ ձեր վրայ, և ուրիշ բանի պէտք չունիմ : (Ձափահարութիւնք) :

() րէս մինչև տարւոյն մէջ ունեցած միջոցնիս քիչ է, նոյնպէս ընելէք դասախօսութեանս վրայ մտածելու ժամանակս . վասնորոյ փնտուելի թէ ի՞նչ նիւթ աւելի յարմար կրնար ըլլալ թէ միջոցին, և թէ ինքզինքս պատրաստելու ժամանակին քիչութեանը նկատմամբ : Ինձ երեցաւ թէ Աւրոպիոյ նոր պատմութեան

վրայ ընդհանուր տեսութիւն մը , քաղաքակրթութեան յառաջանալուն նկատմամբ . քաղաքակրթութեան պատմութեան վրայ ընդհանուր հայեցողութիւն մը , ինչպէս՝ իր ծագումն , յառաջ երթալն , իր նպատակն և իր սկզբունքն , ինձ երևցաւ , կրսեմ թէ , այսպիսի տեսութիւն մը , կրնար մեր ունեցած կարճ միջոցին հետ յարմարիլ : Այս է ահա , դասերուս նիւթն :

Ըսի թէ Աւրոպական քաղաքակրթութեան վրայ պիտի խօսիմ . զի յայտնի է թէ Աւրոպական քաղաքակրթութիւն մը , թէ Աւրոպայի զանազան Ա իճակաց քաղաքակրթութեան մէջ աստիճան մը միութիւն ունի . թէ ժամանակաց , տեղեաց , պարագայից շնայելով , գրեթէ մի և նոյն դէպքերէ կախումն ունի . թէ մի և նոյն սկզբունքներ ունի , և թէ ամեն ուրիշ գրեթէ իրարու մօտ արդիւնքներ կարտադրէ : Աւրեմն , Աւրոպական քաղաքակրթութիւն մը կայ , որոյ վրայ ընդհանուր տեսութիւն մը պիտի ընեմ :

Արևս կողմանէ , յայտնի է թէ այս քաղաքակրթութիւնն , ոչ ինքն կրնայ փնտռուիլ և ոչ իր պատմութիւնը քաղուիլ Աւրոպական Ա իճակաց միայն մէկուն պատմութեանը մէջ : Արշափ որ ալ մի է , սակայն զանազանութիւն ալ ունի . զի մասնաւոր Արկրի մը մէջ գլխովն

ծնունդ առած չէ . իր ամբողջութեան մասունքները ցիր և ցան են . երբեմն Վաղղեոյ , երբեմն Մեգղեոյ , երբեմն Վերմանիոյ , երբեմն Սպանիոյ մէջ փնտուելու է իր պատմութեան տարերքը :

Մենք (Վաղղեացիք) աղէկ զիրքի մէջ ենք այս փնտուելու և Ներոպական քաղաքակրթութիւնը սովորելու : Պէտք չէ բնաւ մէկը շողոքորդել, և ոչ իր Ներկիրը (Տայրենիք) . սակայն կարծեօքս , կրնայ ըսուիլ առանց շողոքորդութեան թէ Վաղղեա , Ներոպիոյ քաղաքակրթութեան կեդրոնն եղած է : Չափազանցութիւն ըրած կըլլանք ըսելով թէ , Վաղղեա միշտ յառաջ գացած է , ըստ ամենայնի , իրը պարագլուխ ազգաց : Օճանազան ժամանակներու մէջ շատ աղգերէ ետ մնացած ունի . ինչպէս արուեստից մէջ՝ Իտալիայէն , քաղաքակաշտութեան մասին՝ Մեգղեայէն : Արեւի է ուրիշ նկատմամբ ալ , ժամանակ ժամանակ , Ներոպիոյ ուրիշ Ա իճակներէ ալ ետ մնացած ըլլայ . այսու ամենայնիւ անկարելի է ուրանալ թէ , ամէն անգամ որ Վաղղեա , քաղաքակրթութեան մէջ ետ մնացած է , նոր աշխուժութիւն մ'առնելով , շուտով ամենուն հաւասարած կամ ամենէն առաջ անցած է : Ոչ միայն այսպէս պատահած է իրին , այլ քաղաքակրթ-

Թող գաղափարները , Հաստատութիւնք , եթէ կարող եմ այսպէս ըսել , երբ տեղափոխուել ուզեցին , աւելի բերրի և ընդհանուր ընել : Աւրոպական քաղաքակրթութեան օգտին ծառայել , ամենքն ալ , Վաղղիոյ մէջ , նոր պատրաստութիւն մը կրել ստիպուեցան . և Վաղղիայէն է որ , աւելի բերրի , աւելի հարուստ , իբրև երկրորդ հայրենիքէ մը , Աւրոպիոյ յաղթութեան յարձակեցան : Չկայ քաղաքակրթութեան վերաբերող մեծ գաղափար , մեծ սկզբունք մը , որ ամէն կողմ տարածուելու համար , նախ Վաղղիայէն անցած չըլլայ :

Ասոր ալ պատճառը սա է թէ Վաղղիական տաղանդին մէջ աւելի դիւրին և զօրաւոր կերպով ընդհանրացող ընկերական համակրական բան մը կայ , զոր և ոչ մէկ ժողովուրդ մ'ունի . թէ լեզունիս , թէ մեր մտաց , սովորութեանց մասնաւոր յատկութիւնը , մեր գաղափարներն աւելի հանրական են , աւելի պարզութեամբ կներկայանան հասարակութեան , աւելի դիւրութեամբ կթափանցին : Մէկ խօսքով պարզութիւնը , համակրութիւնն , ընկերականութիւնը , Վաղղիոյ և իր քաղաքակրթութեան մասնաւոր կնիքն է , և այս որպիսութիւններն են որ , զինքն Աւրոպական քաղաքակրթութեան մէջ ամենէն յառաջագէմն ըլլալ կուտային :

Երբ այս մեծ դէպքին , քաղաքակրթու-
թեան պատմութիւնը սովորիչ կուզուի , չէ թէ
անխորհուրդ ընտրութեան և քմաց ծառայել
է , Վաղղիան , այս ուսման կեդրոնն առնելով ,
այլ նոյն ինքն քաղաքակրթութեան , սովորիչ
ուզուած դէպքին թուն իսկ սրտին մէջ դրուել է :

Վէպքին , կրսեմ , Պարոնայք , և դիտ-
մամբ զանի կրսեմ . զի քաղաքակրթութիւնն
ալ դէպք մ'է , ուրիշ ամէն դիպաց նման
սովորելու , նկարագրելու , պատմելու ենթակայ
դէպք մը :

Պատմութիւնը դէպքերու մէջ ամբօրին-
լու , և զանոնք պատմելու կարևորութեան վրայ
բաւական ժամանակէ ի վեր կխօսուի , և իրա-
ւամբ , ասկէ աւելի ճշմարիտ բան չկայ . բայց
կարծուածէն շատ աւելի և զանազան են պատ-
մուելիք դէպքերը . նիւթական , տեսանելի
դէպքեր կան , ինչպէս՝ արշաւանք , պատերազմք ,
կառավարութեանց պաշտօնական իրողութիւնք .
կան բարոյական և ծածկեալ դէպքեր , որք միւս-
ներէն աւելի պակաս ճշմարիտ չեն . կան ան-
հատական դէպքեր , որք յատուկ անուն մը
ունին . կան ընդհանուր դէպքեր , առանց ան-
ուան , որոնց ճիշտ թուականնին , որք կամ տա-
րին գտնելն անկարելի է , որոնց սահմանը չկրտ-
րուիր , սակայն անոնք ալ միւս դիպաց նման

դէպքեր են , պատմական դէպքեր , որոնք պատմութենէ դուրս չեն ձգուիր առանց զանի խեղելու :

Նոյն իսկ այն մասն ալ , որ պատմութեան փիլիսոփայական մասը կամ պատմութեան իմաստասիրութիւնը կոչուիլ սովորութիւն եղած է , ինչպէս դիպաց իրարու մէջ ունեցած յարաբերութիւնները , զանոնք միացնող կապն , անցից պատճառներն և արդիւնքները , պատմութիւն է , պատերազմաց և արտաքին ամէն տեսակ անցից պատմութեանց նման : Մնշուշտ այս տեսակ դէպքերը պատմելն աւելի դժուար է , շատ անգամ կխափուուի , դժուար է զանոնք խառնելը , պարզ , կենդանի ձևերով զանոնք ներկայացնելը . բայց դժուարութիւնն արդեւք չըլլար , նոցա՝ պատմութեան իսկական մասը կազմելէն :

Քաղաքակրթութիւնը , Պարոնայք , այս դէպքերէն մին է . նկարագրելու , պատմելու ընդհանուր , ծածկեալ , խառն , խիստ դժուար դէպք մ'է , սակայն ըսել չէ թէ , չգոյ է , և ոչ արժանի նկարագրելու և պատմելու : Այս դէպքին վրայ շատ տեսակ խնդիրներ կրնայ յուղուիլ , կրնայ հարցուիլ , ինչպէս հարցուած ալ է , թէ աղէկութիւն մ'է՞ կամ գեշութիւն : Ամանք ասով վճատած են , և ոմանք ալ քա-

ջալերուած . կրնայ հարցուիլ թէ , տիեզերա-
կան դէպք մ'է՛ այս . թէ մարդկային սեռին
ընդհանրական քաղաքակրթութիւն մը , մարդ-
կութեան որոշեալ վիճակ մը կայ . թէ ժողո-
վուրդք դարուց ի դարս անկորուստ մնայած
բան մը իրարու աւանդ ձգած են , որ հետ-
դհետէ պիտի աճի , պիտի մեծնայ միշտ և մնայ
այսպէս մինչև դարուց վախճանն : Բստ իս ,
համոզուած եմ թէ , մարդկութեան ընդհա-
նուր ճակատագիր (վիճակ) մը , քաղաքակրթու-
թեան ամբարի ժառանգ մը , և հետևաբար
քաղաքակրթութեան ընդհանուր պատմութիւն
մը կայ գրեւոր , նկարագրելու և պատմելու : Բայց ,
առանց այսչափ մեծ և այսչափ դժուարաւ լուծուե-
լիք խնդիրներ յարուցանելու , երբ սահմանաւոր
ատենի և տեղւոյ մը մէջ ամիոսիւնք , երբ
մէկ քանի դարերու կամ ժողովրդոց պատմու-
թեամբը բաւականացուի , յայտնի է թէ , այս
սահմաններուն մէջ , քաղաքակրթութիւնը նկա-
րագրելը , պատմելը կարելի ըլլալիք և իր պատ-
մութիւնն ունեցող դէպք մ'է : Արիութեամբ
աւելցնել թէ այս պատմութիւնն ամէն տեսակ
պատմութեանց առաջինն է և կպարունակէ իր
մէջ ուրիշ ամէն պատմութիւններն :

Արդարև , Պարոնայք , չերևիր թէ , քա-
ղաքակրթութեան դէպքն , ամենէն բարձրա-

դոյն , ընդհանուր և վերջնական դէպքն եղած
ըլլայ , և է , որոյ կմիանան միւսներն , որոյ
մէջ կըստանդակին : Յողովորդեան մը պատմու-
թիւնը կազմող բոլոր դէպքերը ժողովէ , որոնք
սովորութիւն եղած է , իր (ժողովորդեան) կե-
նաց տարերքը նկատել : Ա՛ռ , իր Հաս-
տատութիւններն , իր վաճառականութիւնն ,
իւր արհեստքն , իւր պատերազմներն , իւր կա-
ռավարութեան բոլոր մասնաւոր պարագա-
ներն . երբ այս դէպքերն իրենց ընդհանրու-
թեամբը , կապակցութեամբը նկարել , դատել
ուզուի , ի՛նչ է անոնցմէ փնտռուածը : Ար-
փնտռուի թէ այն ինչ ժողովորդեան քաղաքա-
կրթութեան ի՛նչ նպաստած են , ըրած օգուտ-
ներն և ազդեցութիւններն ի՛նչ են : Աւ ասով
ոչ միայն կատարեալ գաղափար մը կրնայ առ-
նուիլ , այլ և կշարտուի և կհասկցուի իրենց
ճշմարիտ արժէքը . տեսակ մը գետեր են ,
որոնցմէ՝ Ավկիանոսին մէջ բերելիք ջրոց հա-
շիւը կպահանջուի : Քաղաքակրթութիւնն ալ
ժողովորդեան հարստութիւնը տուող տեսակ մը
Ավկիանոս է , որոյ գիրկը միանալու կուգան
ժողովորդեան մը կենաց բոլոր տարերքն , իւր գո-
յութեան բոլոր կարողութիւններն : Ա՛սի այն-
քան ճշմարիտ է , թէ , այնպիսի դէպքեր , որք
իւրենց բնութեամբը մահազեր կուլուած են և

անարդուած , որք ժողովրդոց վրայ ցաւօք կը-
ծանրանան , բռնաւորութիւնը , զորօրինակ , և ան-
խշխանութիւնն , եթէ որեւէ կերպիւ քաղաքա-
կրթութեան նպաստած են , եթէ անոր մեծ քայլ
մ'առնելու առիթ եղած են , է՛հ՝ ուրեմն , մինչև
մէկ սահման մը ներելի են իրենց պակասու-
թիւնքը , գէշութիւննին . այնպէս թէ , ուր որ
քաղաքակրթութիւնը կ'սեանուի , և զինքն հա-
րըստացնող գէտքերը , զանի ձեռք ձգող ջան-
քերուն զինը մոռնալու հակամիտութիւն կը լայ :

Կան գէտքեր ալ որք ստուգիւ ընկերա-
կան շնն կրնար կոչուիլ , անհատական գէտքեր ,
որք աւելի մարդկային հօգւոյն , քան թէ հա-
տարակաց կենաց կօգնեն . ինչպէս կրօնական
կարծիքները (կամ հաւատք) և փիլիսոփայական
կարծիքները , գիտութիւնք , գրականութիւնք ,
արհեստք : Այս գէտքերը մարդուս վերարե-
րիլ կերելն , թէ զանի կատարելագործելու՝ թէ
սիրցնելու , և նպատակ ունենալ , յաւէտ իր
ներքին բարելաւութիւնը կամ իր զուարճու-
թիւնը , քան թէ իր ընկերական վիճակն : Ա՛հ՝
ուրեմն , գարձեալ քաղակրթութեան նպատա-
կաւ է որ նոյն իսկ այս գէտքերն ալ շատ ան-
գամ նկատուած են և նկատուիլ կուզուին .
Ա՛մէն ատեն , ամէն տեղ , կրօնքը՝ ժողովուրդ-
ները լուսաւորած ըլլալը պարծենցած է . զի-

տութիւնք , գեղարուեստք , արհեստք , իմացա-
կան և բարոյական ամէն տեսակ ծնունդք կամ
արդիւնք այս փառքին մէջ մաս ունենալ բո-
ղոքած են . և երբ ընդունուեցաւ թէ քաղա-
քակրթութիւնն անոնց ալ կվերաբերէր , զանոնք
յարգած , գոված կարծուեցաւ : Այսպէս աս-
մենէն կարևոր գէպքերն , արտաքին արդիւնք
չունեցող ինքնին ամենէն բարձրագոյն , միայն
մարդուս հոգւոյն յարաբերութիւն ունեցող
գէպքերը , կարևորութիւն կստանան , գերա-
զանցութիւնը կաւելնայ , երբ քաղաքակրթու-
թեան հետ ունեցած յարաբերութիւննին փրն-
տուի : Ահա այս ընդհանուր գէպքին յարժէքն ,
որ ինչ բանի գպչի , կուտայ . և ոչ միայն ար-
ժէք կուտայ , այլ կան պարագաներ ալ , ուր
վերոյիշեալ գէպքերն , ինչպէս կրօնական արա-
րողութիւնք , փիլիսոփայական կարծիքներ , ար-
ուեստք , քաղաքակրթութեան վրայ ունեցած
ազդեցութեան նկատմամբ նկատուած են և
դատուած . ազդեցութիւն մը , որ սահման և
ժամանակ մը իրենց արժանեաց և դնոյն որո-
շիչ չափը կըլլայ :

Ինչ է , ուրեմն , Պարոնայք , կհարցնեմ ,
Ինչ է , ուրեմն , դեռ պատմութիւնը չսկսած ,
ինքն ըստ ինքեան միայն նկատելով , բոլոր ժո-
ղովրդոց կենաց նշանն , և համառօտութիւնն

եղող այսքան ծանր , այսքան տարածեալ , այս-
քան թանկագին դէպքն :

Այս չունիմ փիլիսոփայութեան մէջ իյ-
նալու և ոչ որ և է մտացածին սկզբունքներ
յառաջ բերելու , և յետոյ քաղաքակրթութեան
մնութիւնն իրրև հետեանք մը հանել : Այս
մեթոտով շատ սխալանաց մէջ իյնալու դի-
րութիւն կայ : Հոս ալ , նոյնպէս , քննելու և
նկարագրելու դէպքի մը կհանդպինք :

Բաւական ժամանակէ ի վեր , և շատ Ար-
կիրներու մէջ ~~առաջին~~ բառը կգործած-
ուի . շատ կամ քիչ յստակ , շատ կամ քիչ
ընդարձակ մեկնութիւններ տալով . բայց վեր-
ջապէս բոլորն ալ կգործածեն և իրար կհաս-
կնան : Բայց պէտք է սովորիլ այս բառին
հոգին , իր ընդհանուր , մարդկային և ռամկա-
կան նշանակութիւնը : Գրեթէ միշտ , ամենէն
ընդհանուր բառից սովորական առումին մէջ ,
աւելի ճշմարտութիւն կայ , քան թէ առ երևոյթ
ամենէն ճիշտ և գիտնական մեկնութեանց* մէջ :
Դատողութիւնն՝ ուղիղ բանն է , բառերուն
հասարակ նշանակութիւնը տուող , և է , դա-
տողութիւնը , մարդկութեան տաղանդը : Բառի

*Տես Թանգարան Աիլիկիոյ . հասոր ա-
բաջին . երես ք . յառաջաբանին :

մը հասարակ նշանակութիւնը հետզհետէ և դիպաց առթիւ կշինուի . քանի որ դէպք մը կներկայանայ , որ ծանօթ բառի մը նշանակութեան մէջ կմտնէ , բնականաբար կընդունուի . բառին նշանակութիւնը կտարածի , կմեծնայ և հետզհետէ զանազան դէպքերը , զանազան դադափարներն , որոնց բնականաբար , մարդիկնոյն բառին կյարին , կյարին արդարև : Անդհակառակն , երբ բառի մը նշանակութիւնը , գիտութեամբ որոշուած է , մէկ կամ մէկ քանիներու գործն եղող այս որոշումն , իրենց մտքին զարկած մէկ քանի մասնաւոր դէպքի առթիւ կկատարուի : Ասոր համար է որ ուսումնական սահմաններն աւելի նեղ և աւելի պակաս ճշմարիտ են քան թէ բառերուն ռամկական նշանակութիւնը : Սովօելով , իբրև դէպք , հազախիւրհոն բառին նշանակութիւնը , փնտռելով իր մէջ պարունակեալ բոլոր դադափարները , մարդոց դատողութեան համեմատ , աւելի յառաջ պիտի երթանք նոյն իսկ դէպքին ուսման մէջ , քան թէ մենք ալ ուսումնական սահման մը տալ փորձենք , որչափ որ ալ առերես աւելի յստակ և ճիշտ երևնայ :

Այս խուզարկութիւնն սկսելու համար , մէկ քանի ենթադրութիւններ յառաջ պիտի բերեմ . պիտի նկարագրեմ մէկ վիճակի , տե-

սակի ընկերութիւն մը , և յետոյ ինքզինքնուս
պիտի հարցնենք , թէ ընդհանուրին բնա-
կան աղիւստը քաղաքակրթութեան ժողովրդեան
մը վիճակը պիտի գտնէ՞ , թէ այն է , մարդոց
բնականաբար , Կառնոսի-Բիւն բառին տուած
նշանակութիւնն :

Ահա ժողովուրդ մը , որուն արտաքին
կեանքը քաղցր , հանգիստ է . քիչ հարկ կը-
վճարէ , բնաւ չնեղուիր , ընտանի յարաբե-
րութեանց մէջ արգարութիւնը կտիրէ . մէկ
խօսքով , նիւթական կացութիւնն , ամբողջովին
առնելով , բաւական աղէկ և կանոնաւոր է :
Բայց միանգամայն սոյն ժողովրդեան իմացա-
կան և բարոյական գոյութիւնն ամենայն զգու-
շութեամբ անշարժութեան և քունի , չեմ ու-
ղեր ըսել , հարստահարութեան մէջ պահուած .
զիչ չզգար , այլ ճնշման տակ է : Ասի առանց
օրինակի չէ : Վանուեցան շատ մը փոքրիկ աղ-
նուսպետական հանրապետութիւնք , ուր ժո-
ղովուրդն իբրև ոչխարի հօտ պահուեցան ,
աղէկ խնամուած և նիւթապէս երջանիկ , բայց
առանց իմացական և բարոյական աշխուժու-
թեան : Այս է քաղաքակրթութիւն կոչուածն :

Այս է քաղաքակրթութեան ժողովուրդ մը :


Ահա ուրիշ ենթադրութիւն . Ժողովուրդ
մը , որոյ նիւթական կացութիւնն աւելի պակաս

քաղցր , պակաս հանդիստ , սակայն անտանելի չէ : Համառօտիւ , բարոյական , իմացական պիտոյքները բնաւ մոռցուած չէ . կուտան որ և է սնունդ մը . սոյն ժողովրդեան մէջ , բարձր , մաքուր զգացումներ կ'մշակին . իր կրօնական , բարոյական կարծիքները (հաւատալիքները) բաւական յառաջ դացած են . բայց մեծ խնամք կտանին ազատութեան սկզբունքը խեղդելու . իմացական և բարոյական պիտոյքներուն պէտք եղածին չափ հոգ կտարուին , ինչպէս ուրիշ տեղ նիւթականին : Ամենուն ճշմարտութիւնը կ'իմտուեն , բայց և ոչ մէկուն կներեն , որ ինքն իր ձեռօքը զանի փնտուէ : Սոյն ժողովրդեան բարոյական կնիքն է կենաց անշարժութիւնն . այս այն վիճակն է , որոյ մէջ ինկած են Ասիոյ բնակչաց շատերը , ուր Աստուածպետական կառավարութիւնը դադարական վիճակի մէջ կպահեն զմարդիկ . այս է Հնդկաց վիճակը , զորօրինակ : Սոյն հարցումը կընեմ , զոր ըսի վերի ժողովրդեան համար . թէ , այս է քաղաքակրթուող ժողովուրդ մը :

Անթաղրութեան տեսակը բոլորովին փոխելով , հետեւեալ օրինակն յառաջ կբերեմ . Ահա ժողովուրդ մը , որոյ մէջ , անհատական ազատութեանց մեծ տարածում , սիւռում մը կայ , բայց անկանոնութիւնն ու անհաւասար

րութիւնը չափազանց է . աղբեցութեան և
բախտին ձեռքն է . ով որ , եթէ կարող չէ ,
ճշնեալ է , կտանջուի , կոչնչանայ . ընկերական
վիճակին տիրող նշանն է բռնութիւնը : Այս
մէկն , որ չգիտնայ , Աւրոսպային այս վիճակէն
անցած ըլլալն . այս ալ քաղաքակրթեան վիճակ
մ'է : Անշուշտ կրնայ պարունակել հետզհետէ
զարգացուելիք քաղաքակրթութեան սկզբունք-
ներ . բայց այսպիսի ընկերութեան մը մէջ աչքի
զարնուածն , արդարեւ մարդոց դատմամբ քա-
ղաքակրթութիւն կոչուածը չէ :

Չորրորդ և վերջին ենթադրութիւն մ'ալ
կրնեմ : Ամէն մէկ անհատի ազատութիւնը
խիստ մեծ է . իրարու մէջ անհաւասարութիւն շատ
քիչ անդամ կպատահի : Ամէն ոք իր ուղածը
կընէ , և իր ընկերոջ կարողութենէն չտարբե-
րի . բայց շատ քիչ ընդհանուր շահեր , շատ
քիչ հասարակաց զգացումներ , շատ քիչ կար-
ծիքներ , քատ քիչ ընկերութիւն . մէկ խօս-
քով , անհատաց կարողութիւններն և գոյու-
թիւնը կսփռին և կանցնին առանձին , առանց
մէկըմէկու վրայ աղբելու , առանց փոքրիկ նշան
մը թողելու . յաջորդ սերունդք ալ կթողուն
ընկերութիւնն այն վիճակին մէջ , ինչպէս որ
ընդունած էին . այս է վայրենի ցեղերու վի-
ճակն . ազատութիւն և հաւասարութիւն ունին ,



տակայն քաղաքակրթութիւնն բնաւ :

Արնայի այս ենթագորութիւնները բազմապատկեւ, բայց կարծեմ թէ բաւական են, Կառուցութեան Կոմիտէին բառին բնական և ռամկական նշանակութիւնը հասկցնելու :

Յայտնի է թէ վերոյիշեալ վիճակաց և ոչ մին, մարդոց բնական դատումին համաձայն հասկցած Կառուցութեան Կոմիտէին բառը կպատասխանէ : Այս ինչն համար . ինձ կերևի թէ առաջին դէպքն, որ Կառուցութեան Կոմիտէին բառին մէջ կփրնտրուի, (և այս ալ յառաջ բերած օրինակներէս կհետևի), յառաջագիմութեան, զարգացման դէպքն է . անմիջապէս յառաջ գացող ժողովուրդ մը կհասկցնէ, ոչ թէ տեղէ տեղ փոխելու, այլ վիճակը . ժողովուրդ մը, որոյ կացութիւնը կընդարձակի և կբարւոյրի : Ինձ կերևի թէ, քաղաքակրթութիւնն բառին մէջ պարունակեալ հիմնական գաղափարն է, յառաջագիմութեան, զարգացման գաղափարն :

Ինչ է այս յառաջագիմութիւնն, որն է այս կատարելագործութիւնը : Ան կտեսնուի ամենէն մեծ գիմարութիւնը :

Բառին ստուգաբանութիւնն ամենայն ճշտութեամբ պատասխանել կերևի . զի կըսէ թէ քաղաքական կենաց կատարելութիւնը, բուն իսկ բնկերութեան, մարդոց իրարու հետ յարաբերութեանց զարգացումն է :

Այս է, արդարև, Գաղատիոս-Քիւն բառն արտասանած ատեն, մարդոց միտքին զարնող առաջին դաղափարն. անմիջապէս, ընկերական հաղորդակցութեանց ընտիր կազմութեան ամենէն մեծ աշխուժութիւնը, ծաւալումը. մէկ կողմանէ, ընկերութեան մէջ կարողութեան և բարորութեան միջոցներու աճող արդիւնք մը. միւս կողմանէ, անհատից մէջ, ստացեալ բարորութեան և կարողութեան հաւասար բաշխում մը:

Այս է ամէնը, Պարոնայք. Գաղատիոս-Քիւն բառին բնական, սովորական նշանակութիւնը. դէպքն ուրիշ աւելի բան չպարունակեր:

Նոյնը կըլլար եթէ հարցնէինք. Մարդկային տեսակն, ուրիշ բան չէ, այլ միջոց խումբ մը, ընկերութիւն, ուր ամէն բան կանոնաւորութիւն և բարորութիւն կպահանջէ. ուր որքան աւելի շատ ըլլայ աշխատութիւնն և աշխատութեան պտղոց բաշխումն հաւասար, այնքան աւելի նպատակին հասած և յառաջադիմութիւնը կատարելութեան հասած պիտի ըլլայ:

Մարդոց բնական ազդումը, մարդկային վիճակին համար այսչափ նեղ սահման մը չընդունիր: Իրեն կերելի, առաջին հայեցումն, թէ, Գաղատիոս-Քիւն բառն ընկերական հաղորդակցութեանց, կարողութեան և

ընկերական մարտութեան կատարելութենէն աւելի ընդարձակ, աւելի խառն և աւելի բարձրագոյն ման մը կայարունակէ :

Վեպքերը, հասարակաց կարծիքն և բառին ընդհանրապէս ընդունուած նշանակութիւնը, սոյն բնական ազդումին կհամապատասխանեն :

() րինակ առ, և ում, հանրապետութեան գեղեցիկ ժամանակներուն մէջ, Պիւնիկեան երկրորդ պատերազմէն յետոյ, իր ամենամեծ առաքինութեանց ատեն, երբ աշխարհիս յաղթութեան կգիմէր, երբ ընկերական վիճակն յայտնապէս յառաջագիմութեան մէջ էր : Առ, յետ այնորիկ () գոստոս Վայսրին ժամանակի և ումն, որ ատեն իր անկումն սկսեց, որ ատեն ընկերութեան յառաջագէմ շարժումը դադրած էր, որ ատեն որ գէշ սկզբունքներն ընդհանրանալու մօտ էին. այսու ամենայնիւ չկայ մտածող և ըսող մը թէ () գոստոսի և ումը, Փապիոսի կամ Չիչինաթոսի և ումէն աւելի քաղաքակրթեալ էր :

Աւրիշ կողմ անցնինք, ժԱ՛. Խ և ժԱ՛. Խ դարերու Վաղղիան առնենք. յայտնի է թէ, ընկերական վիճակին, անհատաց իրենց մէջ բաժնուած բարօրութեան նկատմամբ, ժԱ՛. Խ և ժԱ՛. Խ դարուց Վաղղիան, Եւրոպիոյ ուրիշ շատ երկիրներէ ստորին էր, զորօրինակ

Հողանտայէն և Անգղիայէն : Կարծեմ թէ Հոլանտայի և Անգղիոյ մէջ ընկերական աշխուժութիւնը, Վաղղիայէն աւելի մեծ էր, աւելի շուտ կաճէր և իր արդիւնքներն աւելի աղէկ կբաշխուէր : Այսու ամենայնիւ, հարցուր ընդհանուր դատողութեան, որ պատասխանէ թէ ԺԱՆ. Գ և ԺԱՂ. Գ դարուց Վաղղիան, Աւրոպիոյ ամենէն լուսաւորեալ երկիրն էր : Աւրոպա այս խնդրոյն մէջ չվարանեցաւ : Աւրոպական գրականութեան բոլոր գործոց մէջ, Վաղղիոյ վրայ, հասարակաց այս կարծիքին նշանները կտեսնուին :

Արնայ ուրիշ շատ երկիրներ ցուցուիլ, ուր բարօրութիւնն աւելի մեծ է, աւելի շուտ կաճի, ուրիշ տեղէ աւելի աղէկ բաշխուած է մարդոց մէջ, և ուր, սակայն, մարդոց յօժարական բնական ազդումէն, ընդհանուր դատողութեան մէջ, քաղաքակրթութիւնն, ընկերական նկատմամբ աւելի ստորին դատուած էր, նոյն երկիրներէն, ուր ստուգիւ աւելի քիչ է :

Ի՞նչ կնշանակէ այս . ի՞նչ ունին, ուրեմն, այս երկիրներն, որոնց կուտայ, յանուն քաղաքակրթութեան, այս արտօնութիւնն : Այլ կվարձատրէ նաև այսպէս առատօրէն, մարդոց գաղափարին նայելով, ան բանին համար որ իրօք չունին :

Ընկերական կենաց զարգացմանէն զատ ուրիշ զարգացում մ'ալ յստակ կերպով կկատարուի . այն է անհատական կենաց , ներքին կենաց , նոյն ինքն մարդուն , իր կարողութեանց , զգացմանց և դաղափարաց զարգացումն : Այժմէ հոն , ընկերութիւնն ուրիշ տեղէ աւելի անկատար է , սակայն և այնպէս մարդկութիւնն աւելի մեծութեամբ և կարողութեամբ կտեսնուի : Եւ զատ մը ընկերական յաղթութիւններ կան ընելիք , սակայն իմացական և բարոյական անհամար յաղթութիւններ արդէն եղած են :

Եւ զատ աղէկութիւններ և իրաւունքներ շատերէն կպակսին . բայց շատ մեծ մարդիկ կապրին ու կփառաւորուին աշխարհիս առջև , Գրականութիւնք , գիտութիւնք , արհեստք ըստ ամենայնի կգործեն : Ամէն ուրեք ուր մարդկային սեռն այս մեծ պատկերներուն փայլումը կտեսնէ , մարդկային բնութեան այս փառաւոր պատկերներն , ամէնուրեք ուր կտեսնէ բարձրագոյն կարողութեանց այս դանձը , կընդունի և կկոչէ քաղաքակրթութիւն :

Արկու դէպք , ուրեմն , կպարունակին այս մեծ դէպքին մէջ . երկու պայմաններով կգոյանայ , և կճանչցուի երկու դրութիւններով . այսինքն , ընկերական աշխուժութեան զարգացումն և անհատական աշխուժութեան զարգա-

ցումն — ընկերութեան յառաջադիմութիւնն և մարդկութեան յառաջադիմութիւնն : Եւ մէն ուրեք , ուր մարդուս արտաքին կացութիւնը կը տարածի , կկենդանանայ , կբարւոյքի , ուր որ մարդուս ներքին բնութիւնը փառօք , մեծութեամբ կփառաւորուի , և շատ անգամ ընկերական վիճակին մեծ անկատարելութեանը չնայելով , մարդկային սեռը կծափահարէ և կհզոչակէ քաղաքակրթութիւնն :

Եւ յս է , եթէ չեմ սխալիր , մարդոց ընդհանուր կարծեաց , բոլորովին մտացի , պարզ քննութեան արդիւնքն : Եթէ բուն իսկ պատմութեան դիմենք , և թէ քաղաքակրթութեան մեծ անցից բնութիւնը փնտռենք , բոլոր այն դէպքերը զորս ամենքն ալ կլկայեն թէ , քաղաքակրթութեան մեծ քայլ առնել տուած են , վերոյիշեալ երկու տարրերց թէ մին և թէ միւսը պիտի գտնենք : Միշտ անհատական կամ ընկերական զարգացման անցքերն են , այն դէպքերն , որք փոխած են ներքին մարդն , իր գիտցածները , սովորութիւնները , կամ իր արտաքին վիճակն , իր նմանեաց հետ ունեցած յարաբերութեանց զիրքը : Վերիստոնէութիւնը , զորօրինակ , չեմ ըսեր իր ծննդեան , իր գոյութեան առաջին դարերուն , բնաւ ընկերական վիճակին չդիմեց . բարձրաձայն աղաղակեց թէ

անոր բան մ'ընելիք չունի . հրամայեց գերիին որ տիրօջն հնազանդի . նոյն ժամանակի ընկերութեան մեծ գէշութեանց , մեծ անիրաւութեանց և ոչ մէկին դէմ յարձակեցաւ , Այսուամենայնիւ , ո՞վ պիտի ուրանայ թէ Վրիստոնէութիւնը նոյն վայրկեանէն սկսեալ քաղաքակրթութեան մէկ մեծ դարագլուխն է : Ինչո՞ւ համար . որովհետեւ ներքին մարդը , կարծիքները , զգացողութիւնը փոխեց . որովհետեւ ըստոյն , իմացական մարդը վերստին ծնաւ :

Ուրիշ տեսակ անցք մը , ճգնաժամ մ'ալ տեսանք , որ չէ թէ ներքին մարդուն ազդեց , այլ իր արտաքին վիճակին , որ ընկերութիւնը փոխեց և ծնաւ : Անշուշտ ասիկայ , քաղաքակրթութեան որոշիչ ճգնաժամերէն մին էր : Աչքէ անցուր բոլոր պատմութիւնն , ամեն տեղ մի և նոյնը պիտի գտնես : Վաղաքակրթութեան յառաջագիմութեան նպաստող այնպիսի կարեւոր դէպք մը չպիտի գտնես , որ վերոյիշեալ երկու տեսակ ազդեցութեանց մին կամ միւսը ներգործած չըլլայ :

Ահա , եթէ չեմ սխալիր , բառին ռամկական և բնական նշանակութիւնն . ահա դէպքը , չեմ ըսեր սահմանուած , այլ զրեթէ կատարելապէս կամ գէթ իր նշաններովը նկատարուած , ապացուցուած : Վաղաքակրթու-

Թեան երկու տարերքն ալ ունինք : Հիմայ , Պարոնայք , այս երկու դէպքերէն մին բաւական է զանի բաղկացնելու : Աթէ ընկերական վիճակին կամ անհատական մարդուն վիճակին զարգացումն առանձին ներկայանար , քաղաքակրթութիւն եղած պիտի ըլլար : Մարդկային սեռը զանի պիտի ընդունէր : Ամ թէ այն երկու դէպքերն ունին իրարու հետ այնպիսի սերտ և անհրաժեշտ յարաբերութիւն մը թէ , եթէ մէկզմէկ չծնին , այսու ամենայնիւ անբաժանելի են . և թէ ուշ կամ կանուխ մէկն զմիւսը կարտադրէ :

Ինձ կերևի թէ , այս խնդիրն երեք կերպով կրնայ լուծուիլ : Արնայ քննուիլ քաղաքակրթութեան երկու տարերք բնութիւնն , և հարցուիլ , եթէ այս նկատմամբ , խիստ սերտ կապուած կամ կարևոր են իրարու , թէ ոչ : Արնայ պատմաբար փնտռուիլ , եթէ արդարեւ , այն երկու տարերքն առանձնաբար ծնունդ առած են , մէկն առանց միւսի . կամ եթէ միշտ մէկն զմիւսը ծնած է : Արնայ վերջապէս հասարակաց կարծիքին , դատողութեան ենդարկուիլ : Աս նախ հասարակաց կարծիքին պիտի դիմեմ :

Այլ երկրի մը վիճակին մէջ մեծ փոփոխութիւն մը կըլլայ , երբ հոն հարստութեան


և կարողութեան մեծ զարգացում մը , ընկերական բարօրութեան բաշխման մէջ յեղափոխութիւն մը կտեսնուի . այս նոր դէպքը հակառակորդներ կունենայ , մաքառումներէ կանցնի . և միշտ այսպէս կը լլայ : Ի՞նչ կըսեն ընդհանրապէս փոփոխութեան հակառակորդները . թէ ընկերական վիճակին այս յառաջադիմութիւնը , մարդուս ներքին վիճակը , բարոյական վիճակը մի և նոյն կերպիւ չբարւոքեր , չկենդանացներ . թէ ծուռ և խաբւրայ յառաջադիմութիւն մ'է այս , որ կ'իմասէ մարդուս գոյութեանը , բարոյականութեանն . իսկ ընկերական զարգացման բարեկամներն ամենայն ուժով այս յարձակումը կ'մերժեն . ընդհակառակը , կ'պնդեն թէ , ընկերութեան յառաջադիմութիւնն անպատճառ բարոյականութեան յառաջադիմութիւնը կ'ծնի . թէ երբ արտաքին կեանքը կ'կանոնաւորի , ներքին կեանքն ալ կուղղի և կ'փափկանայ . այսպէս յառաջ կ'ընկնի խնդիրն նոյն վիճակին հակառակորդաց և բարեկամաց մէջ :

Ճիտեսլով ենթադրութիւնը , համարէ թէ բարոյական զարգացումն յառաջադիմութեան մէջ ըլլայ : Ի՞նչ կ'սոստանան ընդհանրապէս այս մասին աշխատող մարդիկ . Ի՞նչ խոստացած են , ընկերութեանց ծննդեան , կրօնական

զլուխներն , իմաստասէրք , (փիլիսոփայք) , բա-
նաստեղծք , որք կաշխատէին , սովորութիւնները
փափկացնելու , կանոնաւորելու : Ընկերական
վիճակին բարօրութիւնը , բարւոքկեցութեան
աւելի հաւասար բաշխումը խոստացան : Ինչ-
կենթադրեն , կհարցնեմ ձեզ , երբեմն այս
վէճերն , երբեմն այս խոստմունքները : Կեն-
թադրեն թէ , մարդոց բնական և ինքնաբերա-
բար համոզման մէջ , քաղաքակրթութեան եր-
կու տարերքներն , ընկերական զարգացումն և
բարոյական զարգացումն , իրարու հետ սերտ
կերպիւ կապուած են . թէ մէկին երևան ել-
լելէն , մարդկային սեռն զմիւսը կյուսայ : Ընա-
կան այս համոզման համար է որ երբ , երկու
զարգացմանց մէկը կամ միւսը ձեռք ձգելու
կամ նուաճելու համար , կհաստատեն կամ սուտ
կհանեն անոնց մէկ ըլլալը : Վիտցուած է թէ ,
եթէ կարելի ըլլար համոզել զմարդիկ որ ըն-
կերական վիճակին բարօրութիւնը , մարդոց
ներքին յառաջադիմութեան պիտի մնասէ ,
ընկերութեան մէջ տեսնուած յեղափոխու-
թիւնն արգիլեն և տկարացնեն պիտի : Միւս
կողմանէ երբ մարդոց կխոստացուի ընկերու-
թեան բարօրութիւնն անհատին բարօրութեամբն ,
յայտնի է թէ նոցա միտումն է այս խոստման
հաւատալ . որով և կյաջողին . — ուրեմն մարդ-

կութեան քնականաբար հաւատքն է թէ քաղաքա-
կրթութեան երկու տարերքներն իրարու հետ
կապուած են, և փոխադարձաբար մէկզմէկ
կծնին :

Աթէ աշխարհիս պատմութեանը դիմենք,
մի և նոյն պատասխանը պիտի ընդունինք, Վիտի
գտնենք թէ ներքին մարդուն բոլոր մեծ զար-
գացումներն ընկերութեան նպաստած են, ինչ-
պէս ընկերական վիճակին բոլոր մեծ զարգա-
ցումներն յոգուտ մարդկութեան : Այս երկու
դէպքէն մէկը կամ միւսն է որ կտիրէ, փառօր
կերենայ, և մասնաւոր նշան մը կուտայ շարժ-
ման : Արբեմն ալ շատ ժամանակէ, հազարա-
ւոր փոփոխութիւններէ, խոչնդոտներէ ետքն
է որ, երկրորդ դէպքը կծնի, կզարգանայ և
կուգայ առաջինին սկսած քաղաքակրթութիւնն
ամբողջացնելու : Բայց մօտէն քննելով, զա-
նոնք իրար միացնող կապը կգտնուի : Ասխախ-
նամութեան ընթացքը նեղ սահմաններու ե-
թակայ չէ . երեկուան առաջադրած սկզբուն-
քին հետևութիւնն այսօր քաղելուն վրայ ան-
հանգիստ չըլլար . դարերէ ետքը պիտի առնէ,
երբ ժամանակը գայ . և խոհեմաբար, ծանրու-
թեամբ իրաւաբանելու համար, ըստ մեզ, իր
պատճառն ալ ճիշտ է : Ասխախնամութիւնն
աճապարել չունի . կքալէ անհունութեան մէջ,
չոմերօսի նկարագրած շատուածներուն նման .
և դարեր կանդնին զայլ մ'ընելու համար :



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0573331

ԱՄՍԱԹԵՐԹ ԿԻԼԿԻԱ

1. ԿԻԼԿԻԱ, ինքարարական ամսն ան-
գամ ճշ:
2. Բաժանորդագրութեանը արագիւն է:
3. Տարեկան գինը ԿԱՆՍՏԱՆ ԿԵՆ ԵՐ-
ՏԱԹ ՄԷՃԻՏ է:
4. Մէկ թուոյն գինն է ԵՐԿՈՒՄ ԳՐՈՒՇ,
և սողալը ինչոյ շահուտ ամենէլ ա-
մեն ամիս, արանց Բաժանորդ գրութե-
լան:

Ղամիկ և յարասած հեղեղեալ հասցիով
պէտք է ուղարկել—

Տնօրէն Մ. Բ. Իսթիսեան, Խմբագիր կի-
լիկեան ամսագրի. Կոստանդնուպօլիս .
Ղալաթիէն Տեղերեօն Խան . Թիւ 14.

Docteur M. P. Utudjian,
rédacteur du Guiliguia
Revue Hygiénique Arménienne.
Constantinople,
Galata, Deyirmen han N^o. 14.